



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

0010, ՏՏ, ք. Երևան, Զաքյան 7-2
Տեlex.՝ (+374 10) 600 701, 600 704
Տեlex.՝ (+374 10) 600 703
Էլ-փոստ՝ info@advocates.am
Կայք՝ www.advocates.am

№ 01/01/947-19
« 04 » 04 2019թ.

Հայաստանի Հանրապետության
Բարձրագույն դատական խորհրդի նախագահ՝
պարոն Գագիկ Հարությունյանին

Հարգելի՛ պարոն Հարությունյան,

Հաշվի առնելով դատարանների կարևորությունը ժողովրդավարական հասարակությունում, ինչպես նաև դատական համակարգում առկա որոշակի խնդիրներին հրատապ արձագանքելու անհրաժեշտությունը, Ձեզ ենք ներկայացնում այն խնդիրները որոնց իրենց ամենօրյա մասնագիտական գործունեության ընթացքում բախվում են փաստաբանները, ինչպես նաև դրանք հաղթահարելու մեր առաջարկությունները՝

1. Մարզերում ոչ աշխատանքային օրերին բացակայում են հերթապահները և հետադարձ կապի միջոցները, ինչն անհրաժեշտ է անհապաղ բողոք ներկայացնելու համար:

Նշված խնդրի լուծման նպատակով առաջարկում ենք, որպեսզի բոլոր մարզերում ոչ աշխատանքային օրերին սահմանվի հերթապահություն, ինչը կնպաստի արդարադատության մատչելիությանը:

2. Բացակայում են դատարանների աշխատակիցների հետ շփման հստակ մեխանիզմներ, ինչը տեխնիկական հարցեր պարզելը անհնարին է դարձնում: Շատ հաճախ դատարանի աշխատակիցները չեն պատասխանում հեռախոսազանգերին, ինչպես նաև փաստաբանների՝ տեխնիկական բնույթ ունեցող հարցերին:

Նշված խնդրի լուծման նպատակով առաջարկում ենք, որպեսզի բոլոր կազմերը ունենան էլեկտրոնային հասցեններ, որոնց պարտավոր կլինեն պատասխանել տեղեկատվություն տրամադրելու տեսքով, իսկ հեռախոսային կապի միջոցներով ինֆորմացիա տրամադրելու դեպքում առաջարկում ենք հեռախոսային խոսակցությունների ծայնագրման համակարգ ներդնել, ինչն էլ իր հերթին կնպաստի հեռախոսային խոսակցությունների որակի բարձացմանը:

3. Դատարաններից ծանուցումները և որոշումները չափազանց ուշ են ստացվում: Datalex.am կայքում տեղեկությունները շատ ուշ են լրացվում:

Նշված խնդրի լուծման նպատակով առաջարկում ենք էլեկտրոնային համակարգի գործարկում, որը հնարավորություն կտա էլեկտրոնային եղանակով ուղարկել բոլոր ծանուցումները և դատական ակտերը: Վերջինս նաև կնպաստի գործի քննության ժամկետների կրճատմանը: Բացի այդ, datalex տեղեկատվական կայքում դատական գործերի տվյալների հնարավորինս արագ լրացումը հնարավորություն կտա խնայել ժամանակը և որ ամենակարևորն է՝ տվյալների փոխանցումը կլինի շատ ավելի մաքուր: Առաջարկվում է նաև նույն համակարգում նշվի դատավորի նստավայրի հասցեն:

4. Datalex.am կայքում չեն տեղադրվում արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման, արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթներին առնչվող տվյալները, ինչպես նաև նախաքննության փուլի ժամանակ դատական վերահսկողության արդյունքում կայացվող դատական ակտերը:

Նշված խնդրի լուծման նպատակով առաջարկում ենք datalex.am համակարգում լրացնել արբիտրաժային վարույթի հետ կապված տվյալները, ինչպես նաև դատական վերահսկողության արդյունքում կայացվող դատական ակտերը (նախաքննության գաղտնիությամբ պայմանավորված այս որոշումները կարող են տեղադրվել քրեական գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ներկայացնելուց հետո):

5. Դատարանները կատարողական թերթերը ուշ են տրամադրում:

Նշված խնդրի հիմնական պարճառը հանդիսանում է նաև այն հանգամանքը, որ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարողական թերթերը դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը ներկայացնելու համար հստակ ժամկետ նշված չէ: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը օգտագործում է «անհապաղ» եզրույթը ինչն էլ դատարանների կողմից յուրովի է մեկնաբանվում:

6. Համատարած խախտվում է ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը: Մասնավորապես, նույնիսկ հրատապ քննություն պահանջող գործերով դատական նիստերը նշանակվում են ողջամիտ ժամկետի կոպիտ խախտումներով (ալիմենտի բռնագանձում, երեխայի բնակության վայրի որոշում և այլն): Ավելին, հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունները քննվում և որոշումը կայացվում է ամիսներ անց, ինչը շատ դեպքերում նույնիսկ իմաստազուրկ է դարձնում հայցի ապահովման միջոցի կիրառումը:

Առաջարկվում է օրենսդրական փոփոխությունների միջոցով ընդհանրացնել, ինչպես նաև հրապապ լուծում պահանջող այլ գործերով սահմանել գործի քննության առավելագույն ժամկետներ: Մշտապես քննարկման առարկա դարձնել

ողջամիտ ժամկետները խախտող դատավորների պատասխանատվության ենթարկելու հարցը:

7. Դատարաններում գործը գրասենյակի կողմից դատավորին ուշ է փոխանցվում, ինչպես նաև որոշ դատարաններում գրասենյակները բացակայում են (օրինակ՝ Քանաքեռի նստավայր (Երևան Թբիլիսյան խճուղի)), ինչն ավելի է դժվարեցնում գործին առնչվող փաստաթղթերը մուտք անելը:
8. Ձևական պահանջների չպահպանման պատճառաբությամբ հայցադիմումների վերադարձ (օրինակ՝ դատարանը վերադարձնում է հայցը, եթե հայցադիմումում գրվել է հասցե, այլ ոչ թե՝ հաշվառման հասցե):

Ելնելով վերոգրյալից հայցում ենք Ձեր աջակցությունը նշված խնդիրները լուծելու հարցում:

Հարգանքով՝

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
նախագահ՝ Արա Զոհրաբյան